

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### **WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: <u>info@westernprelacy.org</u> Website: <u>www.westernprelacy.org</u>



## ԱՌԱԶՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈℹԹԻԼՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԼՈՅ ԾԽԱԿԱՆ ՅԱՄԱՅՆՔԻՆ

#### - ՏՕՆԱԽՄԲՈՒՄ՝ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 110ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Կիրակի, 30 Յունուարին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Սուրբ Պատարագին եւ փոխանցեց օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը։

Ս. Պատարագը մատուցեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վահան Քինլ. Կոստանեան։

Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութեան եւ հոգաբարձութեան ներկայացուցիչներուն ընկերակցութեամբ նախ եւ առաջ այցելեց Կիրակնօրեայ դպրոց, ուր տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը դիմաւորեցին զինք եւ ծանօթացման պահ մը ունեցան։ Բարի գալուստի խօսք արտասանեց հոգաբարձութեան անդամներէն բարեշնորհ Կարօ Սարկաւագ Փօլատեան։

Ապա, Առաջնորդ Սրբազան Յայրը իր պատգամը տուաւ աշակերտներուն, կեդրոնանալով Յայ Մանուկի Տարուան խորհուրդին վրայ։

Աշակերտները զանազան հարցումներ հարցուցին, որոնց Սրբազանը պատասխանեց համբերութեամբ եւ մեծ հետաքրքրութիւն արթնցնելով անոնց մէջ։

Յանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը նուերներու հետ, իր օրհնութիւնները բաշխեց անոնց։

Եկեղեցական արարողութենեն վերջ, եկեղեցւոյ սրահին մեջ տեղի ունեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ 110-րդ տարեդարձին նուիրուած ճաշկերոլթը։ Իրագործուեցաւ կոկիկ լայտագիր մը։

Յովիւն ու հոգաբարձութիւնը, ըստ տարիներու բարի աւանդութեան, յուշանուէրներով պատուեցին ու գնահատեցին եկեղեցւոյ անձնդիր ծառայողները։ Առաջնորդ Սրբազան Յայրը փոխանցեց իր օրհնութեան խօսքը։

Ձեռնարկին ներկայ էին Ազգային Վարչութեան անդամ Պիլ Սաաթճեան եւ ժողովականութեան անդամներ։

# PRELATE VISITS HOLY TRINITY CHURCH OF FRESNO AND PRESIDES OVER 110<sup>TH</sup> ANNIVERSARY CELEBRATION

On Sunday, January 30<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the parish community of Holy Trinity Church of Fresno where he met with Sunday School teachers and students, presided over Divine Liturgy and the 110<sup>th</sup> anniversary banquet.

The day began with a visit to the Sunday School. The Prelate, accompanied by Executive Council and Board of Trustees members, was welcomed by the director and teachers, and following brief introductions, all headed to the hall where the students had assembled.

Welcoming remarks were delivered by Board of Trustees member Deacon Garo Poladian.

The Prelate delivered his blessings and message to the students, and offered answers and explanations to the many questions the students put forth.

At the end of the visit, the Prelate presented the students with mementos.

Divine Liturgy was celebrated by Parish Pastor Rev. Fr. Vahan Gosdanian. The Prelate delivered the sermon.

Following the church service, the 110<sup>th</sup> anniversary of the church was celebrated. An artistic program took place and servants of the church were commended and recognized for their service.

The Prelate presided over the banquet and delivered his message.

Executive Council member Mr. Bill Sahatdjian participated in the day's events.